

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

15.11.2021թ

ք.Գյումրի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Վարդան Սարգսյանս ուսումնասիրելով թիվ 07030581 և 07030571 կատարողական վարույթների նյութերը

## ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 28.12.2020թ տրված թիվ ԵԴ/8068/17/20 կատարողական թերթի համաձայն պետք է Ա2 Արմենակ Ազատի Հակոբյանից և Արաիկ Ազատի Հակոբյանից համապարտության կարգով հոգուտ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել 7588684 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսները, տույժերը:

Ինչպես նաև բռնագանձել բռնագանձվող գումարի 5 տոկոսը՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ներքոհիշյալ անշարժ գույքը

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	Գույքի քանակը
1	ք. Գյումրի Աթարբեկյան փողոց 267 տուն	14 700 000	11 025 000	1

Ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 04.01.2022թ:

### Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադատության կարգով, որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լուսի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լուսի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում գետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լուսի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լուսի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լուսի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լուսի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լուսի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: **Տասնհինգերորդ** հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լուսի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լուսը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լուսն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լուսը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լուսի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Հարկադիր կատարող



Վարդան Սարգսյան